



Միջազգային համագործակցության պայմանագիր
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի
և
Հունգարիայի Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանի
միջև

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը և Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանը (այսուհետ՝ Կողմեր), կնքում են հետևյալ համաձայնագիրը՝ ակադեմիական փոխանակումը և համագործակցությունը խթանելու նպատակով, մասնավորապես.

1. Համագործակցել Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանում «Հայագիտություն» մասնագիտությամբ միջազգային ուսումնական ծրագիր ներդնելու ուղղությամբ;
2. Ստեղծել Գիտական Աջակցության Խորհուրդ, որը ՀՊՄՀ-ի դասախոսական անձնակազմի և փորձագետների միջոցով կսահմանի կրթական ծրագրի չափանիշները, եթե այն մեկնարկի;
3. Իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակում «Հայագիտություն» մասնագիտության շրջանակներում դասավանդման նպատակով;
4. Իրականացնել ուսանողների և հետազոտողների փոխանակում ուսումնառության և ակադեմիական հետազոտությունների իրականացման նպատակով, ինչպես նաև ակադեմիական գիտաժողովների կազմակերպում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ;
5. Օգտագործել ԵՄ ֆինանսավորման հնարավորությունները հետազոտության, համալսարանական զարգացման և ուսանողների փոխանակման նպատակով;
6. Ներկայացնել Պազմանի Պիտեր կաթոլիկ համալսարանի հումանիտար և սոցիալական գիտությունների ֆակուլտետի ուսանողների կողմից հայոց

պատմության վերաբերյալ անգլերենով գրված հետազոտական աշխատանքները
ՀՊՄՀ դասախոսական անձնակազմի գրաքննությանը;

7. Փոխանակել գրավոր և տպագրված գիտական նյութեր, տեղեկատվություն կրթության վերաբերյալ, ինչպես նաև հրավիրել միմյանց մասնակցելու երկու համալսարանների կողմից կազմակերպած կրթությանը վերաբերող հանդիպումներին;
8. Ընդունել ՀՊՄՀ-ի մագիստրոսների և ասպիրանտների, որպեսզի վերջիններս ցուցաբերեն աջակցություն Պազմանի Պիտեր կաթոլիկ համալսարանի դասախոսների կողմից հայտնաբերված հայերենով արխիվային նյութերը հետազոտելու նպատակով;
9. Ուսումնասիրել համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները,
10. Ամառային դպրոցներ իրականացնելու պարագայում հրավիրել երկու կողմերի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին:


Սույն համաձայնագրի խնդիրներից բխող գործողությունները պետք է յուրաքանչյուր առանձին դեպքում սահմանվեն առանձին համաձայնագրերով, յուրաքանչյուր Կողմի կանոններին և կանոնակարգերին համապատասխան, և համապատասխան ֆիննսավորման միջոցների առկայության պայմաններում:

Յուրաքանչյուր Կողմի ներկայացուցիչները պետք է պարբերաբար խորհրդակցեն համատեղ նախագծերի առաջընթացը և հետագա նախագծերը գնահատելու և քննարկելու նպատակով:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է հինգ տարի ժամկետով: Այն կարող է նորացվել երկու կողմերի միջև նամակագրության փոխանակմամբ: Եթե կողմերից մեկը ցանկանում է դադարեցնել համաձայնագիրը, ապա ծանուցումը պետք է տրվի գրավոր դադարեցումից առնվազն վեց ամիս առաջ:


Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկկողմ ստորագրումից և ստորագրված պատճենների փոխանակումից հետո:

**Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան**


Պրոֆ. Ռուբեն ՄԻԲՉԱԽԱՆՅԱՆ
Ռեկտոր

Ամսաթիվ: Երևան 23 / 03 / 2016

Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարան


Պրոֆ. ՍՈՒԲՈՄԻ Սարգսյ
Ռեկտոր

Ամսաթիվ: Երևան 23 / 03 / 2016